

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Քաղաքաշինության կոմիտեի բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. իրականացնում է փաստաթղթային փաթեթների տարանջատում ըստ մարզերի, համայնքների, կարգավիճակի,
2. իրականացնում է փաստաթղթային փաթեթներում տեղ գտած փաստաթղթերի դասավորում այն տրամաբանությամբ, որ փաթեթի սկզբում տեղ գտնեն Կառավարության կողմից 1999 թվականի հունիսի 10-ի N432 և 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1337-Ն որոշումներով սահմանված հիմնական փաստաթղթերն, այնուհետև՝ փաթեթների համալրման նպատակով հավաքագրված լրացուցիչ փաստաթղթերը,
3. խմբավորում է ծրագրի իրականացմանը և կազմակերպմանն առնչվող գրությունները, հարցումները, ցուցակները և այլ փաստաթղթեր,
4. արխիվացման համար նախապատրաստում է փաստաթղթային փաթեթների և ծրագրի իրականացմանն առնչվող փաստաթղթեր, յուրաքանչյուր փաթեթի համար տեղեկատու-որոնողական հնարավորություն ստեղծելու նպատակով կազմում է փաթեթներ, նախապատրաստում է առկա փաստաթղթերի ցանկ,
5. թվայնացնում/սկանավորում է արխիվացման համար նախապատրաստված փաստաթղթերը:

Փորձագետ ներգրավելու ժամկետը՝ պայմանագիր կնքելու օրվանից մինչև 1 տարի ժամկետով

Փորձագետին ներկայացվող պահանջները՝

1. բաժրագույն կրթություն,
2. հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
3. իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,
4. համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Փորձագետի պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները,

2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները,

3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները,

5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2021 թվականի դեկտեմբերի 17-ը
ներառյալ:

Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 150 799 (մեկ հարյուր հիսուն հազար յոթ հարյուր իննսունհինը) ՀՀ դրամ:

Ընտրություն կատարելու եղանակը՝ դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները **g.grigoryan@minurban.am** էլեկտրոնային փոստին պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. դիմում (ձևանմուշը կցվում է),

2. անձնագրի և հանրային ծառայության համարանիշը հավաստող փաստաթղթի պատճենները,

3. կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),

4. արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

5. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճենը (պատճենները),

6. մեկ լուսանկար 3x4 սմ չափսի,

7. համառոտ CV,

8. հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին (հայտարարության ձևը կցվում է):

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 9.30-ից մինչև 12.30-ը:

Աշխատանքի վայրը՝ Քաղաքաշինության կոմիտե /ք.Երևան, Հանրապետության Հրապարակ Կառավարական տուն 3/:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ հեռ. 011 621 768:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

----- - ի
(անունը, ազգանունը և հայրանունը)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով՝ հայտնում եմ հետևյալը.

Պաշտոնից ազատվել կամ վերջին մեկ տարվա ընթացքում ծառայությունը դադարեցվել է՝

1. Կարգապահական տույժ կիրառելու պատճառով _____
(այո, ոչ)
2. Օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու պատճառով _____
(այո, ոչ)
3. Օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու պատճառով _____
(այո, ոչ)
4. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու պատճառով _____
(այո, ոչ)
5. ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու պատճառով _____
(այո, ոչ)
6. Ուժի մեջ մտած՝ կայացված մեղադրական դատավճռի պատճառով _____
(այո, ոչ)
7. Երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու պատճառով _____
(այո, ոչ)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

«-----»----- 2021 թ.

